Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Բանավոր խոսքի ուսուցումը ֆրանսերենի դասավանդման մեջ
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Տաթևիկ Դավթյան Թաթուլի Ուսուցչուհի Ֆրանսերեն 10-11
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	գ.Գառնի,Ջ.Ալեքյան փողոց, 52 շենք Գառնիի Ատոմի անվան հ. 2 ավագ դպրոց 02263878 garni2avag@mail.ru garni2@schools.am

Բովանդակություն

- Ներածություն
- Բանավոր խոսքի զարգացում
- Խոսքային նմուշներ
- Մենախոսություն
- Երկխոսություն
- Դերային խաղ
- Եզրակացություն
- Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հասարակության քաղաքական ու տնտեսական համագործակցության և միջմշակութային կապերի զարգացման արդի ժամանակաշրջանում հատուկ կարևորություն է ստանում օտար լեզվի իմացությունը:Դա անհատին օտար լեզվով հաղորդակցվելու հնարավորություն ընձեռելուց բացի գիտելիքներ է հաղորդում ուսուցանվող լեզվի երկրի մասին, օգնում գնահատել նրա հոգևոր ու մշակութային արժեքները և նպաստում անձի ճիշտ աշխարհընկալման ձևավորմանը:Օտար լեզուների ուսուցման միասնական նպատակ է դիտարկվում օտար լեզվով հաղորդակցական կարողությունների ձևավորումը,այն է՝ օտար լեզվով հաղորդակցվելու ընդունակությունները,ինչպես նաև տվյալ լեզուն կրողների հետ փոխըմբռնման հեսնելու պատրաստակամությունը:Օտար լեզվի գործնական նպատակը ծրագրի սահմաններում հաղորդակցության հիմք ստեղծելն է,այսինքն՝ ըստ իրադարձությունների կարողանալ օտար լեզվով արտահայտվել նախատեսված թեմաների շուրջ(բանավոր խոսք),միջնորդավորված(ընթերցանության) և լեզվական նյութի սահմաններում հասկանալ տեքստեր՝ընթերցելիս կամ ուկնդրելիս:Գործող ուսումնական ծրագրորում առաջնային տեղ է հատկացվում բանավոր խոսքի(le langage oral)ու մտքերի բանավոր փոխանակմանը և ընկալմանը(la comprehension orale)Բանավոր

խոսքի նորդրման փուլի կարևորության օգտին է խոսում այն փաստը,որ աշակերտը աննկատ կերպով,առանց դժվարության յուրացնում է քերականական տարրական նորմեր,բնական ձևով անկաշկանդ կառուցում նախադասություններ՝առանց սևեռելու նախադասության ամդամների կապի և յուս քերականական երևույթների վրա:Ինչպես մի փոքրիկ,որ խոսում է իր մայրենիով,առանց մտածելու,թե ինչ քերականակ օրենքներ օգտագործի,որ նախադասություն կազմի,այնպես էլ օտար բանավոր խոսքը յուրացնող աշակերտը բազմաթիվ կրկնություններից,ավտոմատիզմներից հետո բնազդորեն կազմում է օտար լեզվով նախադասություններ,այնուհետև գիտակցաբար փոխում ավտոմատիզմի հասած կառուցվաքի այս կամ այն անդամը,այսինքն՝ խոսում է ինքնուրույն:Այսպիսով աշակերտի մոտ արթնանում է լեզվի “զգացողությունը”:Օտար լեզուների ուսուցման նպատակները պետք է ապահովեն բանավոր և գրավոր հաղորդակցումը,որն իրականանում է հետևյալ գործառույթների շնորհիվ.
իմացական-ճանաչողական
կանոնակարգող-խնդրանքի,խորհրդի ձևակերպում,խոսքային և ոչ խոսքային գործողությունների խթանում
արժեքային-կողմնորոշեղ,կարծիքի և գնահատականի արտահայտում,հայացքների և համոզմունքների ձևավորում,փաստարկում: Վարքը կարգավորող,բարեկիրթ խոսքի կանոնների պահպանում,որ յուրաքանչյուր ժողովրդի մոտ իր առանձնահատկություններն ունի:
Օտար լեզվի ուսուցան հաղորդակցական նպատակների իրականացման արդյունքնում ձևավորվում են օտարլեզվու խեսքային հմտություններն ու կարողությունները,լեզվական,երկրագիտական գործնականում կիրառելու կարողությունն ու պատրաստակամությունը:

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ինչ դեր է խաղում բանավոր խոսքի ուսուցումը, որպես հաղորդակցման միջոց օտար լեզուների դասավանդման պրոցեսում: {ֆրանսերեն}
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Բանավոր խոսքի ուսուցումը, որպես հաղորդակցման միջոց կարևոր դեր է խաղում օտար լեզուների դասավանդման պրոցեսում, հետևաբար այս թեման շատ կարևորէ թե ուսուցչի, թե աշակերտի տեսանկյունից:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լրացնել միայն սովորողների մասնակցությամբ հետազոտությունների պարագայում
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ/մասեր

Բանավոր խոսքի զարգացումը

Բանավոր խոսքի զարգացումը կատարվում է խոսքային նմուշների միջոցով,որն այն նվազագույն,բայց ամբողջական միավորն է,որը ներառում է և՛ քերականություն,և՛բառապաշար,և՛ հնչերանգ ինչպես նաև արտահայտում է ամփոփ միտք:Յուրաքանչուր խոսքային նմուշ ընդգրկում է մեկ քերականական դժվարություն և ուսուցանվում է որոշակի տրամաբանական հաջորդականությամբ,օրինակ՝առարկայի(գոյական)նրա որակի կամ հատկանիշի(ածական),գործողության(բայ)կամ գործողության հատկանիշի(մակբայ) անվանումները:

Անշուշտ,խոսքային նմուշների իմացությունը չի բացառում նաև քերականական կանոնների գործածությանը:Այդ տեսանկյունքից խոսքային նմուշները կամ տիպային ֆրազները չափազանց կարևորվում են,քանզի դրանք կազմում են մեկ ամբողջություն՝թե՛ բառապաշարը,թե՛ քերականությունը և թե՛ հնչյունաբանությունը դիտվում են որպես հիմնական օղակ լեզվական նյութի և հաղորդակցության միջև:Այդ իսկ պատճառով ուսուցման բովանդակության մեջ անհրաժեշտ է ընդգրկել այնպիսի խոսքային նմուշներ,որոնք բանավոր խոսքի ուսուցման միջոց են:

Միևնույն ժամանակ հաշվի են առնվում այն հաղորդակցական մտադրությունն ու գործառույթները,որոնք իրականացվում են դրանց միջոցով:Օրինակ՝կարողանալ անվանել անձերն ու առարկաները(Ո՞վ է սա:Ի՞նչ է սա),գործողությունը(Ի՞նչ է անում),հատկանիշները(Ինչպիսի՞ն է սա),գործողությունը կրող անձը(Գիրքը ու՞մ նվիրեցիր:Ու՞մ ես օգնում)և այլն:Խոսքային նմուշների միջոցով կարելի է արտահայտել կասկած (հարցական նախադասություն՝առանց հարցական բառի)խնդրանք,ցանկություն

հարցնել(հարցական նախադասություն),կամ հրահանգ տալ(հրամայական եղանակ)և այլն:
Խոսքային նմուշների ներկայացմանը զուգահեռ զարգանում է նաև բառապաշարը,ինչպես նաև ուշադրություն է դարձվում արտասանության վրա:Ես,օրինակ,շատ եմ կարևորում արտասանական վարժությունները(շուտասելուկներ,օրինակ):Դրանք կարելի է կիրառել տարբեր դասարաններում՝
1.Je joue toujours a ce jeu avec Juliette,car je juge que jeune et jolie,elle a plus de joie a ce jeu-la՝
2.Six cent six Suisses sucent ssans cesse et sans souci six cent six saucissons sans sause
3.Trois Turcs trottaient sur trois trois tres etroits etc.
հաշվելուկներ(comptines)
օրինակ՝

Sale,sucre	La creme au citron
Sucre,sale	Cest pour les garcons
La creme a la vanille	Et la creme au chocolat ?
Cest pour les filles	Cest pour moi.
Un,deux,trois	Sept,huit,neuf
Un petit soldat	Il y a une veste neuve
Quatre,cinq,six	Dix,onze,douze
Fait des exercices	Tout le minde samuse.

.նկարները,նկարազարդ պատմությունները(կամ հենց աշակերտների սեփական նկարները)կարող են հիմք ծառայել բանավոր խոսքի զարգացման համար:Չէ՞ որ ֆրանսերենի ուսուցման սկզբնական շրջանը(երրորդ դասարանը)հենց այդպեսէ դրված:Դասագրքի առաջին մասում հերոսների միջոցով ստեղծված են առօրյա,դպրոցական,ընտանեկան,ընկերական կյանքի պարզ իրավիճակներ,որոնք նպաստում ենբանավոր խոսքի զարգացմանը:Այսինքն հասկանալ ուրիշի խոսքը,և սեփականը հասցնել ուրիշին,կարողանալ հարցեր տալ և պատասխանել,արտահայտվել նկարի և իրավիճակի շուրջ,մտնել երկխոսության մեջ ուսուցչի ու ընկերների հետ:
Ֆրանսերենի ուսուցման սկզբնական շրջանը ամենապատասխանատուն է,քանի որ այստեղ է դրվում հետագա կրթության համար անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների հիմքը:Տարրական դասարաններում բանավոր դասընթացներում ընդգրկված դասերը պետք է անցնենխաղային իրավիճակների հետ զուգակցված,չմոռանալով նկարելու,երգելու և ոտանավորներ արտասանելու մասին:Այս տարիքային խմբի աշակերտները կարող են ուկնդրել և հասկանալ ուսուցչին,գիտակցորեն կատարել նրա տված հրահանգները,ճիշտ արտասանել առանձին բառեր ու նախադասություններ(այս փուլում երեխան ինքնուրույն չի կազմում նախադասություն,այլ միայն կրկնում,ավտոմատանում և կիրառում է անհրաժեշտ իրավիճակներում):Պետք է բազմաթիվ կրկնությունների միջոցով

հմտացնել աշակերտին համապատասխան իրավիճակներում օգտագործել սովարած նախադասությունները՝լինեն դրանք գրքի հերոսների հետ կատարված ,թե առօրյա իրենց կյանքին վերաբերող իրավիճակներ:
Նախաայբբենական շրջանում բանավոր թեմաների ժամանակ նախ հանձնարարում եմ աշակերտներին ուսումնասիրել նկարը և փորձել կռահել՝ինչի մասին է խոսվում տվյալ թեմայում և կռահել նաև՝ինևպես է թեման վերնագրված:Այստեղ պետք է անպայման խրախուսել աշակերտների ինքնուրույն պրպտումների ձգտումը,նրա ուշադրությունը,խթանել աշակերտի եզրակացություններ անելու ձգտումը:Հետո ծանոթացնում եմ հերոսների խոսակցությանը:Ֆրանսերենով՝անվանելով հերոսին:Աշակերտները հետևում են գրքով և իմ հետևից կրկնում:Սա միաժամանակ նաև արտասանական վարժություն է:Այնուհետև նրանք սովորում են թեմային վերաբերող բառեր և նախադասություններ,ներկայացնում են գրքի հերոսների խոսակցությունը,կատարում են նրանց դերը:Կարելի է ստեղծել նույն իրավիճակը իրենց համար,դիմել միմյանց իրենց իրական անուններով:Նախաայբենական շրջանում պետք է սովորեցնել ոչ միայն երկխոսություն վարել,այլև,որ քիչ կարևոր չէ,ներկայացնել երկխոսության բովանդակությունը,որևէ իրավիճակ,այսինքն լինել պատմողի դերում(Il dit… Il répond…)մենախոսել:
Մենախոսություն
Սա բանավոր խոսքի ուսուցման կարևոր բաղադրիչներից մեկն է և ենթադրում է առնվազն հետևյալ հիմնական կարողությունները.
.նկարագրել անձերին,իրեր,երևույթներ,իրադարձություններ
.պատմել դեպքերի,իրադարձությունների,իր հույզերի կամ զգացմունքների մասին
.տեղեկացնել,նորություններ հաղորդել
.բնութագրել,դատողություններ անել,կարծիք հայտնել այս կամ այն երևույթի,հարցի մասին,հիմնավորել իր կարծիքը
.հաղորդել բավանդակությանը,հիմնական միտքը՝հիմնվելով տեքստի վրա(Jai tout compris.Je parle.Je expliqué)
.վերարտադրել ընթերցած ուկնդրած տեքստը(Je lis et je raconte)
.արտահայտել վերաբերմունքը ընթերցածի նկատմամբ(Le texte)Le recit me plait.Jai aime ce recrit parce qui lest interessant):
.Օգտվելով տրված մոդելներից և բառապաշարից՝տալ նրանք ֆիզիկակն և մտավոր բնութագիրը(օրինակ ընտանիքի անդամների)

ex:Je pense que…	Selon moi…
Je crois que…	Je ne suis pas dacord
A mon avis…	Cest vrai…

Երկխոսություն
Երխոսությունը ենթադրում է առնվազն հետևյալ հիմնական կարողությունները.
.շփման,հաղորդակցման կանոնների պահպանումը ըստ երկխոսության կոնկրետ տեսակի
.երկխոսության ընթացքում լեզվական և արտալեզվական միջոցների կիրառում՝ կոնկրետ իրադրությանը և զրուցակցին համապատասխան

.երկխոսության ընթացքում ռեպլիկների,լեզվական միջոցների,բառերի,բառային և դարձվածքաբանական միավորների,քերականական կառուծվացքների ճիշտ ընտրություն և ձևակերպում
.խոսքի ռիթմիկ-հնչերգային համապատխանություն երկխոսության հաղորդակցական նպատակներին:Երկխոսությունները նպաստում են բանավոր խոսքի զանգացմանը,հարստացնում աշակերտներին առօրեական բառապաշարով և օգնում զրույց վարել տարբեր թեմաների շուրջ:
Պետք է նշել,որ երկխոսության կազմակերպման հիմքը խոսքային նմուշն է և այն հաճախ հանդես է գալիս որպես այս կամ այն հաղորդակցական մտադրությունն արտահայտող տարբեր բնույթի ռեպլիկ:Երխոսությունը պայմանավորված է իրադրությամբ,մասնակիցների փոխներգործությամբ,արտալեզվական միջոցների առկայությամբ(շարժուձև,դիմախաղ):Երկխոսությունը իրադրային է ,նրա բովանդակությունը հասկանալի է հիմնականում այն իրադրության մեջ,որտեղ ընթանում է :Իրադրությունները կարող են լինել բնական և երևակայական:Իրական կյանքում դա շրջապատող միջավայն է ,տեղի ունեցող իրադարձությունները,որոնք միավորում են զրուցակիցներին և որոշում հաղորդակցության,շփման բնույթը:Ռեպլիկները ի հայտ են գալիս խոսքայինիրադրության մեջ և տարբերակվում են ինչպեսհաղորդակցական մտադրությամբ դրսևորմամբ,այնպես էլ կառուցվածքով:
Իմաստային,կառուցվածքային և հնչերանգային ավարտվածությամբ բնորոշվող ռեպլիկները կազմում են մեկ ամբողջական երկխոսական միավոր(unite de dialogue)այսինքն՝խթան-ռեպլիկըև արձագանք-ռեպլիկը հանդես են գալիսմեկ ընդհանրության մեջ:Օրինակ՝
-Allons au cinema?
-Avec plaisir.
Խնդիրն այն է որ մեկ խթանող ռեպլիկը կարող է ի քանի արձագանք-ռեպլիկ պահանջել:Օրինակ՝նախորդ խթան-ռեպլիկին կարելի է արձագանքել տարբեր ձևերով.
-Allons au cinema?
1.Avec plaisir 2.Je ne peux pas. 3.Quand?
Երխոսության մեջ կիրառվող ռեպլիկները չպետք է միայն հարց ու պատասխանի բնույթ ունենան,քանզի այս ձևը կարող է աշակերտների մոտ թյուր կարծիք ստեղծել,թե զրույցի ընթացքում նրանք պետք է կամ միայն հարց տան,կամ միայն պատասխանեն:
Այստեղից հետևում է,որ բանավոր խոսքը զարգացնելու նպատակով,ուսուցմն հիմքում պետք է դնել ոչ թե առանձին ռեպլիկները,այլ իմաստային և կառուցվածքային կապ ունեցող երկխոսական միավորները,որոնք ընդգրկում են մղող և արձագանքող ռեպլիկներ:
Ուսուցման սկզբնական փուլում սովորողների ուսումնառությունը հիմնվում է առավելապես բանավոր խոսքի ընկալման և վերարտադրման գործունեության վրա:Ուկնդրելու կարողությունները հատկապես երկխոսության անքակտելի մասն են կազմում:Յուրաքամչյուր խոսքային նմուշ/ռեպլիկ ներմուծվում է նախ

բանավոր,իսկ հետո տրվում է դրա գրավոր պատկերը:Աշակերտները ծանոթանում են ներմուծված նյութին լսողությամբ՝ընկալելու այն որպես մեկ ամբողջական իմաստային իավոր,ուշադրություն դարձնելով տվյալ խոսքային նմուշի/ռեպլիկի արտասանությանը,ռիթմիկ խբերի տրեհմանը,շեշտադրությանը: Լեզվական նյութի բացատրությունը ենթադրում է ծանոթացում իմաստին,ձևին և գործածությանը:
Երկխոսության ուսուցումը չի ենթադրում սոսկ հարց ու պատասխանի փոխանակում,ինչը երկխոսության միայն մի ասն է կազմում:Մինչդեռ,բնական հաղորդակցական իրադարձություններում գոյություն ունեն երկխոսության ամենատարբեր
ձևեր(հաստատում,հաղորդում,ողջույն,համաձայնություն,անհամաձայնություն և այլն):Երկխոսությունը բնորոշ են նաև երկխոսական կաղապարները կամ միասնությունները,այսինքն՝խթանող ռեպլիկըև արձագանքող ռեպլիկը:Օրինակ՝
.ողջույն
-Salut,mon petit
-Bonjour,madame/monsieur
.հաղորդում,փաստի գնահատում
-Demain,on va au cirque
-Bonne idee
առաջարկ,համաձայնություն
-On se voui demain,a six heures
-Daccord,je viens avec toi
Երկխոսության կարողություններն ու հմտությունները պետք է ձևավորվեն արդեն յուրացվածռեպլիկներն ու երկխոսական միասնությունները նոր իրադարձություններում գործածվելով:Երկխոսության ուսուցման համար պետք է ստեղծել համապատասխան հաղորդակցական իրադրություններ,որոնք խթանում են երկխոսությունը,սովորողների փոխներգործությունը և խոսքային մտադրությունների իրականացումը:Առանձնացրեք հաղորդակցական իրադրության ստեղծման մի քանի ձև
.Պատրաստի երկխոսության նմուշի ներկայացում,այստեղ կարող է տրված լինել ուղղակի խոսք կամ զրույցի բովանդակությունը:Ըստ այդմ աշակերտները պետք է վերարտադրել գործող անձանց խոսքը,նորկայացնեն նրանց միջև կայացած զրույցը:
.Իրադրության ներկայացում զննական
միջոցներով(նկար,կինոնկար,ձայնագրություն),որտեղ կարևոր է գործող անձանց դերում հանդես գալը,նրանց անունից խոսելը և ոչ թե նկարագրելայն,ինչ երևում է նկարում(Օրինակ,ի՞նչ է տեղի ունեցել մինչև նկարը պատկերելը,ի՞նչ է սպասվում հետագայում,ինչպես կվարվեիր ինքդ և այլն)
.Հաղորդակցական իրադրության խոսքային նկարագրություն կամ ներկայացում(օրինակ՝հարևանուհին եկել է ձեր տուն,մայրիկը տանը չէ,ինչպե՞ս կընդունես նրան,կհրավիրես տուն,կբացատրես,որ մայրիկը շուտով կվերադառնա և այլն)

.Բնական,կյանքին մոտ իրադրությունների ստեղծումը,երբ երեխաները մտքեր են փոխանակում,բանավիճում այս կամ այն երևույթի շուրջ,հայտնում են սեփական կարծիքը:
Օրինակ՝ -Au-tu vu le film Chrek-3?
-Oui,il est tres bon.Et toi ?
Բնական իրադրություններ ստեղծելու համար կարելի է դրան անցկացնել նաև դասարանից դուրս,ասենք՝դպրոցի բակում,այգում,ճաշարանում:Դրանք այն բնական գործոններն են,որոնք խթանում են խոսքային գործողությունը և աստիճականաբար նպաստում են երկխոսության նյութի բարդացմանը:
Եվ այսպես,եթե սկզբնական փուլում սովորողը կարող էր միայն իր համաձայնությունը/անհամաձայնությունը արտահայտել,ապա այժմ կարող է պատճառաբանել,սեփական կարծիք հայտնել,խթանել ընկերոջ խոսքը,նրանմղել խոսելու:
Օրինակ՝-Je vais a la piscine.Tu viens avec moi?
-Je ne peux pas,parce que je suis malade.
Երկխոսությունների միջոցով սովորողները փորձում են միմյանց ճանաչել,տեղեկատվություն փոխանակել:Դժվարության դեպքում կարելի է աշակերտներին առաջարկել երկխոսության մի նմուշ և պահանջել,որդրահիման վրակառուցեն իրենց սեփական խոսքը՝օգտագործելով սեփական ռեպլիկների պաշարը:Այս գործունեությունը սովորողին հնարավորություն կտա հասկանալ այն,ինչ ինքն անում և ասում է,աստիճանաբար զարգացնելով ստեղծագործական մտածողությունը,որն էլ կնպաստի խոսքի զարգացմանը:
Դերային խաղ
Դերախաղները պետք է դառնան ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասը:Դերային խաղերի հաճախակի և հետևողական կազմակերպումը աշխուժացնում է դասավանդման գործընթացը և մեծացնում արդյունավետությունը:
Դերային խաղերի իրականացման համար և կարելի է ժամանակ տրամադրել և կարելի է պահանջել անմիջապես իրականացնել:Այս աշխատանքը նպատակահարմար է սկսել համառոտ,կարճատև առաջադրանքներից՝տալով մանրամասն ցուցումներ,որոնք խթանում են երեխաներին,հարցնել միմյանց անունը,բնակության վայրը,ազգակցական կապերը:Այսպես,օրինակ.
ex1)Ծնողներիդ հետ մեկնում ես Փարիզ և ինքնաթիռում հանդիպում մի տղայի,որն ապրում է Փարիզում:Ծանոթացիր նրա հետ
2)Ma ville natale
Մենք հյուրեր ունենք Ֆրանսիայից:Դասարանը բաժանվում է 3 ղմբի՝զբոսաշրջիկներ,<ուղերկցորդուհիներ> և <դիտորդներ>:Զրույցը տեղի է ունենում զբոսարջիկների և ուղեկցորդների միջև(ձեռքերին,ասենք՝Երևանի տեսարժան վայրերի նկարներ):Դիտորդները պետք է լսեն և տան իրենց գնահատականները:Այսուհետև կարելի է դերերով փոխվել:
3)Au supermarche
Դասարանում ստեղծվում է <<հանրախանութ>>՝ իր տարբեր

բաժիններով:(Կարելի է նախապես բերել տարբեր առարկաներ և խմբավորել):Ամեն մեկին տրվում է որոշակի դեր՝գնորդի,վաճառողի,գանձապահի և այլն:Եվ նա պետք է հանդես գա տվյալ իրադրությունում այդ դերով:Հետագայում կարելի է դերերով փոխվել: Պետք չէ սովորողիցմիանգամից անթերի նախադասություններ կամ իրոք խոսք ակնկալել:Նրա խոսքը կարող է երկարել,քանի որ մտքերը ուղեղում թարգմանվում են մայրենի լեզվից ուսուցանվող լեզվով,հետո նոր հնչում,արտաբերվում:Խոսքում գերիշխում են որոշակի բառեր ու արտահայտություններ,ինչպես՝ Bon-լավ,hein-հը,quoi-ի՞նչ,je veux dire-ուզում եմ ասել,comment dirai-je?-ինչպե՞ս ասեմ:
Հարկ է նշել,որ դերային խաղերը նպատակաուղղված եմ նաև հասարակական-դերային խաղի ձևավորմանը,որը հատուկ է ցանկացած լեզվով հաղորդակցմանը:Կարևոր է նշել ծափահարությունների դերը,ինչպիսին էլ լինի դերային խաղի որակը,այն պետք է եզրափակվի ծափահարությունով,այնուհետև կիաջորդի թեմայի քննարկումը դասարանի կողմից՝դրական կամ բացասական: Ընդհանուր առմամբ,շաբաթական մեկ ժամ դերային խաղը բավական է:

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	
Օգտագործված մեթոդները, գործիքները	Դիտարկման մեթոդ

Իրականացման ժամանակահատվածը	5.09-20. 09
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	10-11 դասարաններ 40 աշակերտ

Եզրակացություններ, առաջարկություններ

Եզրակացություն

Այսպիսով,բանաավոր խոսքի ուսուցումը,որպես հաղորդակցման միջոց,կարևոր դեր է խաղում օտար լեզոների դասավանդման պրոցեսում:Օտար լեզուների դասավանդմանը դպրոցում լեզվական հմտությունների ու հաղորդակցական կարողությունների ձեռքբերումից բացի հետապնդում է նաև սովորողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակ:Նման նպատակների կարելի է հասնել ուսուցման բովանդակության ողջամիտ ընտրությամբ,համապատասխան մանկավարժական և մեթոդական գործընթացների իրականացմանբ,տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների նորովի կիրառությամբ:Այս ասպարեզում կարևորվում է հատկապես

-ինքնուրույնության

-քննադատական մտածողության

-հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Հետևաբար կարելի է ասել,որ դասավանդել նշանակում է նաև հաղոնդակցվել,հարաբերվել երեխաների հետ,ղեկավարել խումբը,զարգացնել միմյանց լսելու,հանդուրժելու,նաև սեփական կարծիքը հայտնելու

կարողությունը:Ուսուցման գործընթացում անհրաժեշտ է ուսուցիչ-աշակերտ,աշակերտ-աշակերտ հարաբերությունների վերանայումը,սովորողների ինքնուրույնության և ինքնուրույն մտածողության զարգացումը:Իսկ այս ամենը նպաստում են միջանձնային շփումների զարգացմանը և խոչընդոտում անհատի մեկուսացումը:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

Գրականության ցանկ
1)Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր,ֆրանսերեն լեզու,Երևան 2007:
2)Աստվածատրյան Մ.Գ.,Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա,Լույս,Երևան 1985:
3)La Cadre europeen commun de referenu pour les langues(CECR)et letaboration de politique linguistique:defies et responsablites,Strasbourg,2007.
4)Արշակյան Անահիտ,Երկխոսության կարողությունների ձևավորման մեթոդիկա ֆրանսերեն նյութի հիման վրա,Երևան,2009:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	